ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզի Ձորագլխի Յուրիկ Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենությունը հայտարարում է մրցույթ՝ դասվարի (17 դասաժամ), ՆԶՊ (5), աշխարհագրության (11), տեխնոլոգիայի (3) եւ ինֆորմատիկա (8) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Ուսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցել ցանկացողները հանձնաժողով են ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝

1. Դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

3. Անձը հաստատող փաստաթուղթ,

4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

5. Ինքնակենսագրություն (Ձեւ 5),

6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 22-ից մինչև սեպտեմբերի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 6-ին՝ ժամը 14:00-ին, Ձորագլխի Յուրիկ Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոցում. հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Ապարան համայնք, Ձորագլուխ բնակավայր, 3-րդ փողոց, շենք՝ 5:

Տեղեկությունների համար զանգահարել 093 32-43-92 հեռախոսահամարով:

Դպրոցի տնօրեն Կ. Սողոմոնյան